

**Հարցաշար**  
**հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի**  
**11-րդ դասարան** **Տևողությունը 180 րոպե**

Արվեստն անկողոպտելի վեհություն է. չի նսեմանում, որովհետև չի կարող ավելի վսեմ լինել, քան կա: Այն մեծ է, ինչպես աշխարհը, և պարզ՝ ինչպես ճշմարտությունը:

Երևակայի՛ր մի պահ՝ եթե գոյություն չունենար *ջութակ* ասված գործիքը, ինչ կկատարվեր Պագանինիի հետ. նրա՝ ինքնաբուխ մեղեդիներով տոգորված սիրտը մշտապես կերգեր մեղմ ու հախուն, սրտապարար ու հուժկու ելևէջումներով: Եվ ոչ ոք չէր ըմբռնի աղարտված միտքն անգամ սրբագործող նվագը, որ մերթ խաղաղեցնում է հոգու խռովքը, մերթ ամոքում լլկվածի անմոռուհի մորմոքը, մերթ բոցավառում վիատվածի մարմրող հույսը: Նույնը կլինեի նաև մեծագույն նկարչի նկատմամբ: Տեսնելով գույների նրբերանգվող թրթիռը՝ անլուր երևակայության մեջ նրա խոկուն, ծովածավալ հայացքը, զգայուն ձեռքերը կստեղծեին անօրինակ կտավներ, որ կծնվեին միայն նրա ներսում: Ու դարձյալ ոչ մեկն այդպես էլ չէր վայելի կենսավառ բոսորի, շենշող ոսկեգույնի, անրջային լաջվարդի հեքիաթային ներդաշնակությունը:

Այդուհանդերձ ո՛չ Պագանինին կդադարեր իր ներքին աշխարհում մեծ երաժիշտ լինելուց, ո՛չ էլ Սարյանը՝ մեծ նկարիչ, բայց մեկն առանց ջութակի, մյուսն առանց ներկերի հավիտենապես անհաղորդ կմնային մարդկությանը: *Իսկ դերասանի ջութակն ու նկարչի երանգայնակը ինքն է և միայն ինքը: Ապա ուրեմն նրա արվեստի արհեստը, անհամեմատորեն դժվար լինելով մյուսներից, անհամեմատորեն վաղանցուկ է, ավա՛ղ:*

1. Մեկնաբանի՛ր շղատառ գրված մտքերը մեկական բարդ նախադասությամբ: (2 միավոր)
2. Երկու նախադասությամբ ներկայացրո՛ւ արվեստի՝ քեզ հոգեհարազատ ճյուղը: (2 միավոր)
3. Տեքստից դուրս գրի՛ր 10 մակդրային որոշիչներ: (1 միավոր)
4. Գրի՛ր *անկողոպտելի, նսեմանալ, հախուն, աղարտվել, լլկվել, խռովք, անլուր, խոկուն, ծովածավալ, շենշող* բառերի՝ տեքստում գործածված իմաստին համապատասխանող հոմանիշը կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
5. Գրի՛ր *Ապա ուրեմն նրա արվեստի արհեստը, անհամեմատորեն դժվար լինելով մյուսներից, անհամեմատորեն վաղանցուկ է, ավա՛ղ* նախադասության շարահյուսական հոմանիշը: Նշի՛ր դերբայական դարձվածի բնույթը: (1 միավոր)
6. Բացատրի՛ր տրված բառակապակցությունների իմաստները մեկ բառով՝ *թեթև նախաճաշ, կրակը խառնելու ձող, ջրից դուրս գցված ժայռ, պարիսպների շուրջը փորված փոս, այրող քամի*: (1 միավոր)
7. Կազմի՛ր մեկական բառ *առ-*, *ամենա-*, *հակ-*, *վեր-*, *տար-*, *հար-*, *փոխ-*, *բաց-* շար-, ստոր- նախածանցներով և դրանց համանուն արմատներով: (2 միավոր)
8. Կազմի՛ր 4 նախադասություն *խռովել* բայի բազմիմաստություններով: (2 միավոր)
9. Բացատրի՛ր «*Հերկուլեսը քառուղու առաջ*» և «*Վսեմից մինչև ծիծաղելին մեկ քայլ է*» թևավոր խոսքերը: Տո՛ւր ծագման մեկնաբանությունները: (2 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «Իմ սիրտը լեռներում է» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)